

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՅԱՅՏԱԳԻՐ 1885-86 ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՑ

ՆԱԽՆԹԻ. — Հաստ խնդրոյ Տեսչութեան Սահմանադրեան վարժարանին կարնց՝ կը հրատարակեմք 'ի Հանգիսիս այս յաղագիրն, փափակելով և մաղեցելով այսպիսի ազգօգուտ ձեռնարկի մը զարգացում և յարատենալիք:

ՍՈ. Ն. Ս. Ս. Ռ Ե Ա. Ն. վարժարանում՝ 1881 թուին հիմնարկուած կարին քաղաքում Մը կըրտիչ Սարգսեան Սահմանադրեանի ծափքով, ունի Գերմաննացւոց կ թթ Ո. Պ. Ա. Ն. (Erziehungsschule) կոչուած Միջնակարգ Վարժարաններուն հոմահաւորապար աստիճան, եւ անոնց պէս իննամեայ ընթացք: Կը բաղկանայ Նախակրթարանէ, որ կը պարունակէ երեք դասարաններ (Ա. Էն մինչեւ Գ.), և կրթարանէ, որ կը պարունակէ վեց դասարաններ (Գ. Էն մինչեւ Թ.): Ապա գային պիտի բացուի նաև մի մասնագիտական շվան եռամեայ ընթացքով:

Նախակրթարանում կ'աւանդուին հետևեալ առարկաները.

1. Կրօն (Սըրբազան Պատմութիւն), 2. Պատմութիւն, 3. Բնագիտութիւն, 4. Աշխարհագրութիւն, 5. Հայերէն Աշխարհաբառ, 6. Տանկերէն, 7. Թուաբանութիւն, 8. Գեղագրութիւն, 9. Գծագրութիւն, 10. Երաժշտութիւն ծայնական, 11. Մարմնամարզեալ Զմշկութիւն, 12. Պարտիզանութիւն:

Կրթարանում կ'աւանդուին հետևեալ առարկաները.

1. Կրօն (Սըրբազան Պատմութիւն, Քրիստոնէական Վարդսավետութիւն, եւ Պատմութիւն Հայաստանեայ Եկեղեցւոյ), 2. Պատմութիւն Ազգային, Սամանեան եւ Ընդհանուր, 3. Բնագիտութիւն (Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն, Հանքաբանութիւն, Երկրաբանութիւն, Բնաբանութիւն, Տանկերէն եւ Տարրաբանութիւն), 4. Աշխարհագրութիւն բնական, Աստեղաբաշխական, Քաղաքական եւ Վաճառականական, 5. Հայերէն Աշխարհաբառ եւ Գրաբառ, 6. Տանկերէն, 7. Գաղղիերէն, 8. Անգիերէն (Կամաւոր), 9. Ռւսորութիւն (Թուաբանութիւն, Գրահաշիւ, Երկրաշափութիւն, Եռամնկիւնաշափութիւն եւ Տօմարակալութիւն), 10. Գեղագրութիւն, 11. Գծագրութիւն եւ Նակարչութիւն, 12. Երաժշտութիւն ծայնական, 13. Երաժշտութիւն գործիական, (Դաշնակ եւ Ձութակ. - կամաւոր), 14. Մարմնամարզ եւ Զմշկութիւն, 15. Պարտիզանութիւն:

Վարժարանը ունի նաև Գործառուն, որի մէջ յարմարաւոր աշակերտք կը պարապին կազմարարութեամբ, ատառձագործութեամբ, գմանագործութեամբ, և այն: Հիմնագիրը մտագիր է Գործառունը հետզհետէ ճախացնել եւ վերածել կատարեալ Արհեստանոցի:

Վարժարանական տարին կը սկսի Սեպտեմբերի 1 ին:

Նոր (1885-86) վարժարանական տարուան մէջ Վարժարանը պիտի ունենայ Նախակրթարանի Ա. Բ. և Գ. դասարանները և կրթարանի Դ. դասարանը:

Հիմնագիրի ծափքով պիտի պահուին 40 ձրիալարդ գիշերօթիկ աշակերտներ:

Թոշակաւոր գիշերօթիկ և ցերեկօթիկ աշակերտներ կ'ընդունուին հետեւալ պայմաններուն համաձայն:

1. Աշակերտներ կ'ընդունուին Օգոստոսի 15 էն մինչեւ Սեպտեմբերի 1 ը:

2. Ընդունելի աշակերտին տարիքը լինելու չէ 7 էն վար և 11 էն վեր:

3. Ընդունելի աշակերտը բերելու է հետը ծննդեան ու մկրտութեան եւ պատուաստի վկայականներ:

4. Բնդունելի աշակերտը պէտք է լինի մարմառվ առաջ, եւ 'ի հարկին պիտի ենթարկուի բժշկութեան :
5. Գիշերօթիկ աշակերտները վճարելու են կանխիկ .

Մուտքի համար միանուագ	5	Օսմաննեան ոսկի
Նախակըրարանի համար, տարեկան	18	" "
Կըրքարանի համար, տարեկան	20	" "

6. Ցերեկօթիկ աշակերտները վճարելու են կանխիկ .

Նախակըրարանի համար, տարեկան	10	Օսմաննեան ոսկի
---------------------------------------	----	----------------

7. Գիշերօթիկ և ցերեկօթիկ աշակերտները կէս Օսմաննեան ոսկի ևս վճարելու են կանխիկ՝ շըմուղի համար :
8. Գործիական Երաժշտութիւն սովորիլ ցանկացողներն իրբեւ մասնաւոր տուրք վճարելու են կանխիկ տարեկան 3 Օսմաննեան ոսկի . Զո՞թակ սովորողները պարտաւոր են նաև հոգալ զործին :
9. Գիշերօթիկներու տարեկան վճարը կը պարունակէ իւր մէջ ուսումնական և նիրթական բոլոր ծափերը, այն է ուսում, սնունդ, հագուստ և տեղն տեսակ առողջապահական ինսարք. ծնողք ստանձնելու չեն ուրիշ որ եւ է ծափք, և աշակերտք Վարժարան ընդունուելու առեն իսկ բներելու չեն իրենց հետ ո և է իրեղէն :
10. Ցերեկօթիկներու տարեկան վճարը կը պարունակէ միայն ուսումնական ծափերը և ցերեկուան ճաշը :
11. Ցերեկօթիկներու զգեստը ծնողք հոգալու են վարժարանի համազգեստին համաձայն :
12. Աշակերտները Նախակըրթարանի կամ Կրթարանի ընթացքը սկսելէն վերջը պարտաւոր են շարունակել զայն մինչև ցաւարու :
13. Եթէ տարուան ընթացքում աշակերտը հիւանդութեան կամ ուրիշ որ եւ է ստիպողական պատճառով բացուկայ լինի վարժարանէն, տրուած տարեկան վճարը չի կրնար յետ պահան, չուղի ծնողքի կողմէն :
14. Վարժարանին երկամսեայ արձակուրդին, որ տեղի կ'ունենայ Յուլիս և Օգոստոս ամիսնե, բում, ծնողք, եթէ ուզեն, կարող են առն տանիլ իրենց գուակները, բայց երթևեկութեան ծափքը իրենց վրայ է . իսկ Վարժարանում մեացողներուն համար յատուկ վճար չի պահանջութիւ:
15. Աշակերտ տալ ցանկացողները ըստ կարելոյն կանուխ ծանուցանելու են իրենց որոշումը Վարժարանի Տեսչութեան :

Կարին, Մայիս 1885.

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ
ՍԱՀԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆԻ

Վարժարանին վերարերեալ նամակներ ուղղուելու են .

Առ Տեսչութիւն Սահասարեան Վարժարանի 'ի ԿԱՐԻՆ

اضرور ده ساناساریان مکتبی نظارتند

Direction du Collège Sanassarean — ERZEROUM, Turquie d'Asie.